



8. ՀԱՆԴՐՍՏԱՆ ՓԱՅԼԵՎԱՆ, ՉԻԼԻ ՓԱՅԼԵՎԱՆ

Կեղի մեկ փայլեվան, անուն՝ Հընդըստան:

Ինքըն երկրի մեջ շատ գերակութեն, ավերութեն կենա, վերջ կը թոնա, կերթա ուրիշ երկիրըմ:

Քաղքի՛մ մեջ կը պատահի, կը տեսնի, օր փայլեվըներ կը թոնին հիրար:

Մե՛կ փայլեվան չըկանա թակավորու փայլեվընին տընա գյետին:

Ինքըն կասա. — Ես տ՛երթամ, խընդ թակավորի փայլեվընին գհւլա՛շ առնեն:

Հուրուշներ կասեն. — Տաւ կործ չունես խընդ էն փայլեվընին, քեյ կը տընա գյետին, քաւ վիզ կը կըտրա:

Էտա Հընդըստան կասա. — Լա՛վ, թե էն ձի էտիր գյետին, իմ վիզ կը կըտրա, լե օր ես էնի տըրի գյետին, ես էնու ի՞նչ տ՛ենիմ:

Ասաց. — Թե տաւ էնի տընես գյետին, թակավոր էնու ախչիկ կը տա քեյ:

Գընա՛ց, թակավորի փայլեվընի խետ գհւլա՛շ առաւ: Թակավորի փայլեվընին էտիր գյետին:

Թակավոր էնոր կանչեց, ասաց. — Քաւ անուն ի՞նչ ա:

Ասաց. — Իմ անուն Հընդըստան փայլեվան ա:

Ասաց. — Ո՞ր երկրեն ես:

Ասաց. — Հընդըստանա երկրեն:

Թակավոր էլա՛վ, ուր ախչիկ էպի, փըսակեց վերեն:

Ժամանակըմ մընաց, փայլեվան թակավորին ասաց. — Հրա՛մա՛ն տուր, դիրսվան ես կերթամ իմ խոր երկիր:

Թակավոր ասաց. — Ազա՛տ ես, կերթաս, գլընա՛:

Թակավոր էնու խետ էտի քիչըմ մալ, ուր փայլեվան էլ էտիո խետ, օր տանի, ուր երկրեն տաւս խանա, նոր տաննա:

Էլան, ընգան ճանքախ: Շատ էկան, քիչ էկան, շատ ու քիչ Աստված գլինա, էկան մեկ սարի՛մ պատահան:

Մեկ մաղարա կեր դա, մըտան էն տեղ, օր քոյընին, չուր առավոտուն էլնին, էրթին:

Տեսան մաղարի մեչ մեկ անգաւթըմ կեր, մեչ կրակ, լե մարթ, պան չըկեր:

Էտա փայլեվան թակավորի փայլեվընին ասաց. — Էսա կրակ, էսա անգաւթ օր շինած, հալբաթ մեկ մարթըմ էրի, չէղի՞ մենք փորձանքի՛մ հանդիպինք:

Փայլեվան ասաց. — Մենք էրկուսն էլ փայլեվան ենք, վո՞ն կանա մեր վերեն:

Տեսան օր հիրիկուն խալիվոր մարթըմ ու տըղե մ՝ էկան, մըտան ներս:

Ասաց. — Օ՛հ, պարի՛ եք էկե, մեհվընե՛ր, մենք ծեր էտս գլիշ-րովըմ կան կը գանք, տաւք ցերեկով եք էկե:

Ասաց. — Ընչի՞ կասես էտա պես:

Ասաց. — Էրկու մարթ տաւն եք, էրկու մենք, էլե՛ք կռվենք, յան տաւք մե կը սպանենք, կընիկ կը տանենք, յան մենք ծե կը սպանենք, կընիկ կը տանք իմ լաճուն:

Էլան, ըսկըսեցին կռիվ:

Եփ օր կռիվ ըսկըսեցին, էրկու փայլեվընին էլ հաղթեցին, թալեցին խոր:

Ամա թակավորի փայլեվընի վերեն էլ խելք չըկեր: Յընդոստան փայլեվան՝ էնու խելք վերեն էր:

Յընդոստան փայլեվան տեսավ, օր շիշըմ կարմըրցուցին, պարգեցին խորի մեչ, խընդ էնոնց ջան: Ինքն գինք էտու մեկ տեղ, թակավորի փայլեվընի ջանդըկից ճըժոց էլալ: Էրկու-իրիք անգամ ա՛յ, ա՛յ, ա՛յ էրաց ու ծեն կըտրեց: Խալիվորն, ուր տըղեն կարծին, թե մեռան, պըռծան:

Խալիվորի լաճ առավ կընիկ, գլընաց էնու հերի մեչ պառկավ, խալիվորն էլ պառկավ էտա տեղ՝ անգաւթի հառաճ, կըրակի տեմ:

Գլիշեր ընցավ մեկ քիչ, փայլեվան ասաց. «Էլ ոչ չըկըտրա,

էսա տեղ մընալով ես անոթի տը մեռիմ, էլիմ յան փախիմ, յան պա մ'ենեմ»:

Խորի ես կուշտ, էն կուշտ փորեց, օտքերու տեղ շինեց, էլնալ տուս խորից, տեսավ, օր խալիվոր կրակի անանք քըղընուկ էր, լաճն էլ մըտեր էր մաղարեն, էն, ուր կընիկ ծեռքեր տըրանծ հի-րարու գըլխու տակ, պառկած:

Ինքըն կանեն քաշեց, խալիվոր մորթեց, դիր գըլնաց խընդ խալիվորու լաճ, օր մորթեր:

Տեսավ՝ էնու կընգան ծեռ էնու գըլխու տակն էր:

Ասաց. — Իմ կընգան ծեռ գըլխու տըղեն քաշեմ, օր չեղի յարալու:

Հուշիկ կընգան ծեռ քաշեց, կանե մ'էթալ, լաճու վիզ կըտ-րեց: Կընիկ հիշարցավ, օր լաճու վիզ կըտրեր էր:

Ասաց. — Վա՛յ, տու ինչպե՞ս բերախտութնով էնու վիզ կըտ-րեցիր:

Ասաց. — Վա՛յ, քու խեր շուն եղի, դեմակ տու գէնի խընծ ծի շատ կը սիրե՞ր:

Կանեն էթալ, գէնի էլ մորթեց: Ինքըն էլ կանաճ դա, մտածեց, ասաց. «Դանոնան էրթան թակավորի մոտ՝ չեղի, համ փայլեվան կուրիսավ, համ ախչիկն ըսպաներ եմ, իմ երկիր էրթամ՝ էն էլ չեղի: Մեկ գերանկ Զիլի՛մ կա, տ'էրթան էնու մոտ, ժամանակըն էնու մոտ տ'ապրիմ, մեկտեղ էնու խետ գերանկութն էնենքը»:

Գըլնաց Զիլիի մոտ:

- Պա՛րև, Զիլի:

- Ասճու պարին:

Զիլի ասաց. — Հընդըստան փայլեվան, ո՞ր տեղեն կը գաս:

Ասաց. — Ծեն մ'եներ, իմ գըլխու գալանծ օր քյեզի ասիմ, տու ծըռես:

Էնու գըլխու գալանծ Զիլիին պատմեց:

Զիլի մտածեց, ասաց. — Հե՛յ, փայլեվան, իմ գըլխու գալանծ խընծ քու շատ ա: Հանա՛ քու կընիկ փուճ կընիկ մ'ա եղեր, չե՛ քու գըլխու գալանծ շատ չիր:

Հընդըստան ասաց. — Զիլի՛, պատմա՛ խի՞ քու գըլխու գա-լանծ, ես էլ խասկընամ:

Զիլի էնու գըլխու գալանծ էնու ըսկըսեց պատմել:

Ասաց. — Փայլեվան, ես մեկ օր էլն, գանցի գերանկութն: Ես

գացի, խասա տաշտի մեջ, գլխեր մուծն ա, տեսա, օր էսպես պանցր-պանցր պան կերևեր, ես գլխոցն, թե ուղտ էր, թալեցի վերեն, ասի թալնիմ: Ես ծիմ քըշեցի մեջքեր, իմ ռըմ գարկեցի, ռըմ տիպավ քար, ռըմ մեջ վե կոտրավ: Էճն, իշկեցի, տեսա, օր գլերեզընատուն էր: Ես վախեմ՝ էսպես զըզվացի: Մեկ էլ ես ինքյն ինքյն մտածեցի, ասի. «Ես Չիլին եմ, աշխարքը գ'իզնից կը վախեննա, ես էսա գլերեզընատնից կը վախենամ»:

Վերջ գացի, գլերեզըններու մեջ էսպես զըվըռեցի, տեսա, օր հիսնի մըռմըռոց կը գն: Գացի, աչկեցի, օր թածն մեկ պերած խորած, էտա մեռլից ա ծեն կէլնի:

Խանեցի տուս էտա մեռել, տեսա, օր մեկ խիվանդըմ, օր էնու խելքը քիչըմ գացեր էր, անխելքը մարթեր գլխոցն են, թե մեռեր էր, պերած են, խորած:

Խանեցի տուս, էնու պատանքը ճեղքեցի, խառցուցի, ասի. — Տիւ ո՞ր տեղացի ես:

Ասաց. — Էսա գլեղացի:

Ասի. — Բիւ անուն ի՞նչ ա:

Ասաց. — Իմ անուն Մահմադ ան:

Ասի. — Մահմադ, տու վի՞ր լաճն ես, վի՞ր տըղեն ես:

Ասաց. — Ես էսա տեղաց բեկի տըղեն եմ:

Ես էլ էտա երկրին բալնդ չեմ, խի վո՞ր տեղեն ա, վի՞ր տըղեն ա:

Մահմադ ասաց. — Ես իմ խոր, մոր մեկ տըղա յեմ, եփ օր տու ծի էսա տեղեն խանեցիր, իմ խոր տարար հանձնեցիր՝ աշխըրքի մալ քյե տը տա: Ամա՝ աշխըրքի մալ օր տա՝ մ'առիր, ծի մեկ քուրըմ կա, էն քուրն ուզն:

Ես առի էն տըղեն, էնու շապիկ ու թումբան՝ խագուցի, առա, տարա էնու խոր դիվանխանի տուռ:

Տըղեն թողի տուս, ես մըտա ներս:

Գացի դիվանխանեն, տեսա, օր ինքնան աղա, բեկ կեն, էկած են էնու սիրտ գլընելու, օր տըղեն մեռեր էր:

Էսպես կայիմ պարկըմ տըվի, հուրհուշներ հըռըկան:

Ասի. — Ջանըմ, հե՞ր կ'ըռըկիք:

Ասաց, թե. — Բեկի լաճ մեռեր ա, հուրհուշներ էկած էնու սիրտ գլընելու:

Ես ասի. - Ի՞նչ տա ձի ամիրեն, օր էրթամ, էնու լաճ սաղ-սա-
լանաթ պերեն:

Ամիրեն եփ լըսեց՝ դըհա հըռըկավ:

Ասաց. - Իմ լաճ մեռե, էսա էկե վեր ձի ծաղըր կենա, պըռ-
մեք պերեք, թալեք գյետին, դաղեք, օր մեկ էլ էնպես մեռնելու
կողմեն չըզըրուցա:

Ասաց. - Հընդըստան փայլեվան, լավ մ'իմ ասածին ականջ
տու:

Ձի առան, էկան, ձի թալեն գյետին, օր տը տըփեն:

Ասի. - Ամիրա՛, տու ընչի՞ ձի տը տըփեք:

Ասաց. - Չէ՞ իմ տըղեն մեռեր ա, տու էկեր ես, վեր իմ սևուն
սխտոր կը ծեծես:

Ասաց. - Թո՛ղ տուր, էրթամ դիվանխանի տուռ, քու տըղեն
պերիմ, գի կանըցըցեր եմ տուռ:

Ես գացի, տըղեն կանչեցի, պերի: Ամիրեն օր ուր լաճ տե-
սավ, խելք գյընաց, ինզավ էն տեղ: Զույաթ տըվեցին տուն, ամի-
րի կընգան, տըղի քուրոչ, տըղի կընգան, ամբոխչ էկան էտա տեղ,
պարեկըմներով, թախըմով, օր ուրախութնից էլ ծըռան:

Չուն ամիրի խելք էկավ էնու վերեն, էլավ, նըստավ, տըղի
վերեն ուրախացավ:

Ձի ասաց. - Դե՛, Չիլի՛, քու ուզած ուզա, տամ:

Ասի՝ ի՞նչ ուզեմ:

Ասաց. - Ի՛նչ կուզես, քու քյեֆն ա, մալ կուզես, ոսկի կու-
զես, արծաթ կուզես:

Ասի. - Ամիրա՛, ո՛չ մալ կուզեմ, ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, թե տա՛ս՝
քու պըստիկ ախչիկ տու ձի: Մինակ էնի կուզիմ:

Ամիրեն ասաց. - Չիլի՛, էտի քու մառիֆաթ չէր, լե ի՞նչ էնեմ,
ուզեցիր: Չիլի՛, իմ տըղի խոգյին ազատեցիր, պերիր, ախչիկըմ
կուրբան էղի քյեզ:

Ախչիկ տըվին ընծի: Վըր ձի փըսակեցին, խընդ ձի չորս-
խինգ բերգիր մալ տըրին: Քանի՛մ օր մընացի էն տեղ, դիրիս գա-
ցի, խաթըր ուզեցի ամիրից, օր տ'էրթամ իմ երկիր:

Ամիրեն ընծի հրաման էտուր, ձի ճամխու տըրեցին: Ես էլա
ճամբախ:

Ամիրեն մեր խետ մարթ կը տըրներ, ես չըթողի:

Ասի. — Ես Չիլիմ եմ, աշխարքը ընծնից կը վախենան, ես խղ-
ղի՞ց:

Էկանք, էկա՞նք, չուր մեկ չու տաճարի մեջ, ավեր խա՛մ կեր:
Էկանք էտա խանի մեջ տըրիմք: Չորս կողմ իշկեցի, տեսա, օր
երկու ավուր ճամբախ էտա խանից գնա՞ն՝ ավաիի չըկա:

Ասաց. — Չընդըստա՞ն փայլեվան, լավ մըտիկ կե՞նի՞ս:

Ես, իմ կընիկ խաց խանեցիմք խուռքու մեջեն, խաց կու-
տիմք, չասե՞ս՝ մեկ չուլախ մարթըմ կա էտա խանի, մեկ կանա
կապուկ ուր չուլախ փորու՞մ, օր էմալ շոտ կը վաճի, օր ինչըխ քա-
մի, հանկանա կը վազա խընդ մարթ, հանա կը գանա, կերթա, մըտի
խանի քունք:

Թու մարթ չըկանա էնու պըմնա:

Չասե՞ս՝ էտա խանիմ էլ խանա Շալանախտան կասեն:

Ես, իմ կընիկ խաց կուտեմք, մեկ էլ տեսա՝ քանու պես
եզար, իմ հանճըվեն խաց տարավ:

Ես գարմացա, ասի. — Եսի ի՞նչ պան ա, օր հեջ թուչար ընց-
նա պան իմ կյանքի մեջ չէր տեսեր:

Կը լսե՞ս, Չընդըստա՞ն փայլեվան: Ես մեկ էլ տեսա՝ քանու
պես էկավ, կանե մ'էթալ իմ փոր, իմ աղքըմեր լըցվան գյետիմ, իմ
կընիկ ասաց. «Ե՛յ, տու ի՞նչ ես, ը՞նս ես, ջը՞նս ես, ի՞նչ ես, ես
գյիտեմ՝ տու ծի խամար իմ մարթաւն գարկիր, էլը մոր պան չա-
նես, գաթի էն կը մեռնի, ես էլ քյե կառնեմ, չէ՛ ես ժահր կը խմեմ,
ես էլ կը մեռնեմ»:

Էնի էկավ, կանա՞վ իմ կընգան կուշտ: Մեկ չուլախ մարթ՝ պի-
պիկ, կեղտ կուկուն:

Իմ կընիկ ասաց. — Դե՛յ, մարթ, քու անուն ի՞նչ ա:

Էտա մարթ ասաց. — Իմ անուն Շալանախտա՞ն՝ ա:

— Չընդըստա՞ն փայլեվան, իմ գըրըխու գալա՞ծ օր էկավ,
ծըմեմ, ցուրտ ժամանակ էր:

Իմ կընիկ էնու ասաց. — Ես քյե կառնիմ, լե տու շատ կեղտ
կուկուն ես, քյե սապոն տամ, գըմա՞ գյետ, լիղկըցի՞, արի՛, քյե
տանտըմ խալավ տամ, խագյի, չըխտ էսա մարթ կը մեռի, ես ու
տու ապրիմք մեկ տեղ:

Խապեց, մարթն ճամխեց գյետ, սապոն էտու, օր լողկընա
ու էլա՞վ, խանի տուռ կայիմ փակեց, քար, պան էտի տըռան հետև,

⁹ Մերկ գող (Ծ. Բ.)

էլա՛վ, թա՛մի՛զ կրակ էրաց, ի՛մ աղքը՛ններ էտու՛ դե՛մ, ի՛մ աղքը՛ններ քա՛շվան ի՛մ փոր: Տեղը՛մ թա՛լեց ի՛մ յարի վերե՛ն, ի՛մ յարե՛ն կարեց: Նոր Շա՛լառա՛ստ լիղկըցա՛վ, էկա՛վ:

- Հընդըստա՛ն փա՛յլեվա՛ն, ի՛մ կընիկ է՛մա՛լ հեքյի՛մ մ' էր, օր մեկ երկիր չըկընդըվեր:

Շա՛լառա՛ստ էկա՛վ, կանչեց, ասաց. — Կընի՛կ, կընի՛կ, արի՛ տի՛ն պա՛ց, ես էկա:

Կընիկ գընա՛ց տըռա՛ն իտև, ասաց. — Տի՛ւ Շա՛լառա՛ստ չես, տի՛ւ ծի կը խապես:

Ասաց. — Ջա՛նը՛մ, ես Շա՛լառա՛ստն եմ:

Ասաց. — Խի քու ծեռ ակնատը վե պե ներս, ես քու ծեռ կը ճանչընամ, օր տի՛ւ Շա՛լառա՛ստն ես:

Էնու ծեռ ակնատը վե էպե տի՛ւս, կընիկ էնու ծեռ պըռնեց, կա՛մեն մեկ իրիսեն խըշթեց, մեկէլ իրիսեն էխան տի՛ւս, ծեռ մընաց ակնատը վե քի՛մ: Զու՛մ խըլիսուն էնի մընաց էտա պարզկա ցըր-տու տե՛մ: Խըլիսուն տեսանք, օր էնի խատեր էր:

Խըլիսուն ի՛մ կընիկ էլա՛վ, մեր պեռներ պա՛ռցեց, ծի գըրկեց, էտի վեր ծիուն, էկանք մեր տուն:

Ասաց. — Փա՛յլեվա՛ն, կընիկ կա, կընիկ էլ կա, տեսա՞ր ի՛մ կընիկ, քու կընիկ անասլ ա էղե:

